

ԱՇՁ բաղադրիչի հիմնական նպատակն է՝ աջակցություն ցուցաբերել կաթի, մսի (ծուկ, թռչուն), մրգի, բանջարեղենի, մեղրի, բարձրարժեք հատապտղի, ինչպես նաև կերարտադրության ոլորտների արտադրողներին, վերամշակողներին և արժեչղթայի այլ մասնակիցներին արտադրանքի որակական ցուցանիշներ հ, ներքին շուկայի պահանջարկ ի, ս ննդամթերքի անվտանգության պահանջներ ի բարելավման, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի արտահանման ծավալներ ի ավելացման հարցերում:

Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է նպատակային ֆինանսական օժանդակություն տրամադրել ՀՀ օրենսդրությանը համապատասխան և պատշաճ ձևով գրանցված գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին, արտադրական, սպառողական և գյուղատնտեսական կոոպերատիվներին, գյուղատնտեսական մթերքի վերամշակման ձեռնարկություններին (բացառությամբ հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների), որոնք ներգրավված են ընտրված արժեչղթաների մեջ և բավարարում են ծրագրի համապատասխանության և ընտրության չափանիշներին:

Շահագրգիռ հավակնորդները (դիմորդները) իրենց կողմից պատրաստված Հայտ-Դիմումները և պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացնեն «Գյուղատնտեսական Ջարգացման Հիմնադրամ»-ի ԱՇՁ քարտուղարություն (375014 ՀՀ ք.Երևան Աղոնց 6/1,54) մինչև 14.02.2018 թ, ժամը 18:00:

ԱՇՁ Բաղադրիչի գործունեության և հայտերի պատրաստման կանոնակարգերին մանրամասն ծանոթացնելու նպատակով «Գյուղատնտեսական Ջարգացման Հիմնադրամ»-ի ԱՇՁ քարտուղարության աշխատակազմը պոտենցիալ հավակնորդների համար կկազմակերպի աշխատաժողով՝ կաթի, մսի (ծուկ, թռչուն), մրգի, բանջարեղենի, մեղրի, բարձրարժեք հատապտղի, ինչպես նաև կերարտադրության ոլորտների արտադրողների, վերամշակողների և արժեչղթայի այլ մասնակիցների համար 12.02.2018թ ժամը 13:00

Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Արգիշտիի փող.7 շենք

«Մոսկովյան մշակութազործարարական կենտրոն «Դոմ Մոսկվի» Երևանում»:

000000000000 000000000000 000000000000 000000000000000000.

Հայտ-Դիմումների պաշտոնական ձևանմուշների լրացման հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ «Գյուղատնտեսական Զարգացման Հիմնադրամ»-ից:

Հասցե՝ - 375014 ՀՀ, ք.Երևան, Աղոնց 6/1, 54

Էլեկտրոնային փոստ՝ - info@agridf.am

Հեռախոս՝ - (+374 12), 551515, 551516, 551513